Կ. ՊՈԼՍԻ «ԲՈՒԼՎԵՐ» ՕԹՅԱԿԻ ԵՐԵՎԵԼԻ ԴԵՄՔԵՐԸ*

Ֆելիքս Մովսիսյան

Բանալի բառեր՝ Թանզիմաթ, Կ. Պոլիս, մասոնություն, օթյակ, Հ. Բուլվեր, Ս. Ազնավուր, Հ. Վարդովյան, Ս. Մանուկյան:

Օսմանյան կայսրությունում մասոնության տարածման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հատկապես 1850-ական թվականների երկրորդ կեսին, որը պայմանավորված էր Արևելյան (Ղրիմի) պատերազմի ավարտից հետո սկիզբ առած Թանզիմաթի երկրորդ փուլով: 1856թ. Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածի համաձայն մեծ տերությունները սուլթանից պահանջում էին բարեփոխումներ իրականացնել [1]: «Թուրքիան եվրոպականացնելու» վերաբերյալ սուլթան Աբդուլ Մեջիդի «մեծադղորդ խոստումները վարդագույն հեռանկարներ էին բացում» [2] ոչ միայն Կ. Պոլսի քրիստոնյա բնակչության, այլև այնտեղ բնակվող օտարերկրացիների շրջանում, որոնք, օգտվելով ընձեռված հնարավորությունից, ձեռնամուխ եղան մասոնական օթյակների հիմնադրմանը:

1850-ական թվականներին Կ. Պոլսում հիմնված բոլոր օթյակների նախաձեռնողները բացառապես եվրոպացիներ էին, որոնց օթյակները գործում էին իրենց մայրենի լեզվով: Առաջնորդվելով բարենորոգումների խոստումներով, որը ճանապարհ էր հարթում կայսրության քրիստոնյա ժողովուրդների «ներքին ազգային, հասարակական և կրոնական գործերի համար» [3], «Անգլիայի Մեծ Օթյակը» ձեռնամուխ եղավ Կ. Պոլսում մասոնական առաջին գաղտնի ընկերությունների ստեղծմանը: 1856 թ. նոյեմբերի 25-ին, Կ. Պոլսի Հասքեո թաղամասում՝ Ոսկեղջյուրի վրա, 28 անգլիացի ծովայինների նախաձեռնությամբ, ովքեր ծառայում էին օսմանյան նավատորմում, հիմնվել է անգլախոս առաջին կանոնավոր [4] «Արևելյան» («Oriental») թիվ 687 օթյակը: Այս օթյակի հիմնադիրների թվում էին «Հայ ազատ որմնադրութեան ռահվիրա» [5] Սերովբե Ազնավուրը (1814-1890) և վաճառական Կոզմա Աղջիկյանը, ով Մանչեստրի «Ուղղամտություն» («Integrity») թիվ 687 օթյակի անդամ էր [6]: «Արևելյան» օթյակը գործել է մինչև 1935 թ. հոկտեմբերի 10-ը և թուրքական կառավարության որոշումով փակվել Կ. Պոլսի մյուս օթյակների հետ միասին [7]:

«Անգլիայի Մեծ Օթյակի» արտոնագրով Կ. Պոլսում հերթական անգլախոս օթյակը հիմնվել է 1861 թ. նոյեմբերի 9-ին: Սկզբում այն գործել է Բոսֆորի եվրոպական ափին գտնվող Բյլըքտերե գյուղում, այնուհետև տեղափոխվել Կ. Պոլսի «Բալտազար» հյուրանոցը [8]: Օթյակը հիմնադրվել է Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Հենրի Բուլվեր Լիթթոնի (1801-1872) նախաձեռնությամբ, Սերովբե Ազնավուրի անմիջական ջանքերով և ի պատիվ դեսպանի կոչվել «Բուլվեր» («Bulwer») թիվ 891 օթյակ: Դեսպան Հենրի Բուլվեր Լիթթոնը սերում էր ազնվական հնագույն ընտանիքից: 1824 թ. Քեմբրիջի համալսարանն ավարտելուց հետո նա երկար տարիներ դիվանագիտական ծառայություն էր իրականացրել եվրոպական մի շարք երկրներում: Նա ոչ միայն կայացած ու փորձառու դիվանագետ էր, այլև բարձրաստիճան մասոն, անգլիական «Հերթֆորդ» («Herteford») օթյակի անդամ [9]: Կ.Պոլսում անգլախոս նոր օթյակը նրա պատվին անվանելը վկայում է այն մեծ հեղինակության մասին, որ վայելում էր Հ. Բուլվերը մասոնության շրջանում:

Իր սկզբունքայնությամբ և գաղափարական համոզմունքներով Հ. Բուլվերը հարգանք ու հեղինակություն ձեռք էր բերել դեռևս երիտասարդ տարիներին: Օսմանյան

---

* Հոդվածն ընդունվել է 29.02.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Հարությունյանը: 11.03.20:

կայսրության դեմ հույների ազատագրական պայքարի տարիներին նա 1824 թ. օգոստոսին՝ լորդ Բայրոնի մահից հետո, իրեն առաջադրել է որպես գործակալ հույների պայքարին օժանդակելու գործում: Լոնդոնում գտնվող հունական կոմիտեն նրան գործուղել է Մորեա, որտեղ հույների պայքարին աջակցելու համար Ալեքսանդրոս Մավրոկորդատոսին (1791-1865) նա հանձնել է 80 հազար լիրա: 1826 թ. Հ. Բուլվերը Հունաստան կատարած իր ուղևորության մասին հրատարակել է հաշվետվություն՝ «Աշունը Հունաստանում» վերնագրով:

1827 թ. օգոստոսին Հ.Բուլվեր Լիթթոնը դիվանագիտական ծառայության է անցել Բեռլինում, 1829 թ. ապրիլին՝ Վիեննայում, իսկ մեկ տարի անց՝ Հաագայում: Վերադառնալով Լոնդոն՝ 1830 թ. հուլիսին ընտրվել է Համայնքների պալատի անդամ Ուիլթոն կոմսությունից: 1830 թ. օգոստոսի 25-ին Բրյուսելում բռնկված հեղափոխությունից հետո Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Աբերդինը (1784-1860) Հ. Բուլվերին հատուկ առաքելությամբ ուղարկել է Բելգիա: Նա լավագույնս կատարել է իրեն տրված առաջադրանքը, մասնակցել բանակցությունների, որի վերաբերյալ 1831 թ. հունվարին նախարարությանը ներկայացրել է հետաքրքիր հաշվետվություն: Հետագա 30 տարիներին Հ. Բուլվերն իրեն ամբողջովին նվիրել է դիվանագիտությանը: 1835-1836 թթ. Բրյուսելում նա նախ անգլիական դեսպանատան քարտուղարն էր, ապա՝ հավատարմատարը: 1837 թ. Հ. Բուլվերը նշանակվել է Կ.Պոլսում անգլիական դեսպանատան քարտուղար: Այդ կարգավիճակում նա 1838 թ. Կ. Պոլսում բանակցություններ է վարել Թուրքիայի արտաքին գործերի նախարար, «երիտասարդ թուրքերի ռահվիրա» [10], թուրք երիտասարդ մտավորական պաշտոնյաների «գաղափարական առաջնորդ և դրոշակակիր» [11], մասոն Մուստաֆա Ռեշիդ փաշայի (1800-1858) հետ: Բանակցությունների արդյունքում Հ. Բուլվեր Լիթթոնի կնքած առևտրական պայմանագիրը Անգլիայի արտաքին գործերի նախարար մասոն լորդ Պալմերսթոնը(1784-1865) անվանել է գլուխգործոց:

1839 թ. հունիսին Հ. Բուլվեր Լիթթոնը դեսպանատան քարտուղարի պաշտոն է զբաղեցրել Փարիզում, իսկ 1843 թ. նոյեմբերի 14-ին նշանակվել Իսպանիայում դեսպանորդ: Այդ պաշտոնում նա 1844 թ. նպաստել է Իսպանիայի և Մարոկկոյի միջև հաշտության պայմանագրի կնքմանը: Միջամտել է Իսպանիայի ներքին գործերին, փորձել Իզաբելլա 2-րդ (1830-1904) թագուհուն ամուսնացնել Անգլիայի թագուհու ազգական արքայազն Կոբուրգցու հետ, բայց այդ մտահաղացումն իրականացնել չի հաջողվել: 1846 թ. Հ. Բուլվեր Լիթթոնը, բրիտանական արտաքին քաղաքական շահերից ելնելով, գաղտնի աջակցել է իսպանական կառավարության ընդդիմադիր առաջադիմական էսկալտադոս խմբավորմանը՝ նպատակ ունենալով իշխանությունից հեռացնել ֆրանսիական կողմնորոշում ունեցող չափավորներին:

1848 թ. մարտին Մադրիդում սահմանադրություն հռչակելու համար բռնկված պայքարը Իսպանիայի վարչապետ գեներալ Ռամոն Նարվաեսը (1800-1868) ճնշել և բռնություններ է իրականացրել, որի կապակցությամբ Հ. Բուլվերը բրիտանական կառավարության անունից հունիսի 10-ին պաշտոնապես բողոք է հայտնել՝ պահանջելով փոխել կառավարության կազմը: Ռ. Նարվաեսը նրան մեղադրել է Իսպանիայի ներքին գործերին միջամտելու և սահմանադրականներին աջակցելու մեջ ու հունիսի 19-ին պահանջել Մադրիդը լքել: Դա հանգեցրել է Անգլիայի և Իսպանիայի միջև դիվանագիտական հարաբերությունների խզմանը: 1849-1852 թթ. Հ. Բուլվերը Ամերիկայի միացյալ նահանգներում դեսպան աշխատած տարիներին բավական հաջող պայմանագիր է կնքել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քլեյթոնի (1796-1856) հետ և ձեռք բերել աներևակայելի հանրաճանաչություն:

1852-1855 թթ. Հ. Բուլվեր Լիթթոնը դիվանագիտական առաքելությունը շարունակել է Տոսկանայում, իսկ Ղրիմի պատերազմից հետո՝ 1856-1858 թթ., դիվանագիտական նուրբ հանձնարարություններ է կատարել Կ. Պոլսում: Նա, որպես լիազոր կոմի-

սար, մասնակցել է Դանուբյան իշխանություններ Մոլդովայի և Վալախիայի միավորման կապակցությամբ ընթացած դիվանագիտական բարդ գործընթացներին: 1858 թ. մայիսից մինչև 1865 թ. օգոստոսը Հ. Բուլվերը Կ. Պոլսում բրիտանական թագավորության արտակարգ դեսպանն էր [12]:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար մասոն Ֆրանսուա Գիզոյի (1787-1874) բնութագրմամբ՝ Հ. Բուլվեր Լիթթոնն իրեն դրսևորել է որպես այնպիսի դիվանագետ, ով «աներևակայելի արվեստով կարողանում է թափանցել այն քաղաքագետների ամենածածուկ մտքերի, նպատակների ու գործողությունների մեջ, որոնց հետ գործ է ունեցել» [13]: Հ. Բուլվեր Լիթթոնը դեսպանի պաշտոնում ոչ միայն հաջողությամբ կատարել է իր դիվանագիտական պարտականությունները, այլև բուռն գործունեություն է իրականացրել մասոնությունն Օսմանյան կայսրությունում տարածելու ուղղությամբ՝ խորապես համոզված լինելով, որ «ազատ որմնադրությունը մեծ առաքելություն ունի Մերձավոր Արևելքի մեջ» [14]:

Հ. Բուլվերը ձգտել է մասոնության գաղափարախոսության և սկզբունքների շուրջ միմյանց մերձեցնել և համախմբել Կ. Պոլսի քրիստոնյա համայնքների մտավորականներին, վաճառականներին ու անվանի մարդկանց: Նրանց հետ սերտ կապեր հաստատած Հ. Բուլվերը 1859 թ. մայիսին Կ. Պոլսում անդամագրվել է «Արևելյան» («Oriental») թիվ 687 օթյակին: 1860 թ. մարտին նա Կ. Պոլսում հիմնել է «Գերմանական Միություն» («Deutscher Bund») օթյակը, իսկ 1860 թ. օգոստոսի 7-ին Զմյուռնիայում գլխավորել «-Հոմեր» («Homer») թիվ 806 օթյակի բացման արարողությունը: 1861 թ. մարտի 31-ին Զմյուռնիայում նա հիմնել է ֆրանսախոս «Հաղթանակ» («La Victoire») օթյակը, այնուհետև ձեռնամուխ է եղել Կ. Պոլսում քրիստոնյաներից և մահմեդականներից բաղկացած նոր օթյակի հիմնադրմանը, որը կրել է իր անունը: 1862 թ. Հ.Բուլվեր Լիթթոնը «Անգլիայի Մեծ օթյակի» գավառային առաջին Մեծ Վարպետն էր Թուրքիայում:

Կ. Պոլսում Հ. Բուլվեր Լիթթոնի գործունեությունը մշտապես գտնվել է հայ պարբերական մամուլի ուշադրության կենտրոնում, որը բազմիցս անդրադարձել է նրան: «Արևմուտքը» ֆրանսիական «Մոնիթյոր դը լա ֆլոթ» թերթից թարգմանաբար տպագրել է դեսպան Հ. Բուլվեր Լիթթոնի ճառից մի հատված, որը վկայում է դիվանագիտության մեջ նրա համարձակ կեցվածքի մասին: Նա իրեն թույլ է տվել սուլթան Աբդուլ Մեջիդին հարցնել. «Ենթադրենք թէ վաղը կործանի օսմանեան տերութիւնը», այդ դեպքում «ով պիտի ըլլի ժառանգորդ նոր փլատակներուն» [15]: Ֆրանսիական թերթը հանդիմանել է Հենրի Բուլվեր Լիթթոնին նման պահվածքի համար: Թերթի կարծիքով դեսպանը պետք է հիշի, որ անգամ եվրոպական ամենափոքր պետությունը իրեն թույլ չի տա ներել ցանկացած դիվանագետի, այդ թվում՝ Անգլիայի դեսպանի «անվայել» արարքը: Թերթը սրա համար անուղղակիորեն հանդիմանում է սուլթանին, ով Կ. Պոլսում թույլ է տվել մի բան, որն «արգելուած է Եվրոպայի արքայանիստ քաղաքներու մէջ» [16]:

Ի տարբերություն ֆրանսիական թերթի՝ արևմտահայ պարբերականներն իրենց մի շարք հրապարակումներում ընդգծում էին անգլիական դեսպանի հանրաճանաչ և հարգված լինելն ու վայելած հեղինակությունը: Արևմտահայության, այդ թվում՝ բարձրագույն հոգևորականության շրջանում Հ. Բուլվերի ունեցած հեղինակության մասին վկայում է «Մասիս» թերթի հետևյալ տեղեկությունը. «1860 թ. հուլիսի 2-ին Կ. Պոլսի Պալատու թաղի գերեզմանատանը ցանկանում էին հուղարկավորել մի բողոքական հայի, ով կենդանության տարիներին հրապարակավ հայոց կրոնն ու կրոնական արարողությունները ծաղրում էր: Դրան ընդդիմացան հայ առաքելական եկեղեցու հազարավոր հետևորդներ և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը: Գործին միջամտեցին քաղաքային իշխանությունները, որոնք հայոց պատրիարքարանին խնդրեցին խնդիրը խաղաղությամբ լուծել և գերեզմանատան մի անկյունում տեղ հատկացնել հուղարկավորության համար: Կ. Պոլսի հայությունը մերժեց այդ խնդրանքը՝ պատճառաբանելով հանգուցյալի դիրքորոշումը իրենց կրոնի նկատմամբ, գերեզմանատան տարածքի

նկատմամբ հայության սեփականության իրավունքը և այդ գերեզմանատանը որևէ բողոքականի թաղված չլինելու հանգամանքը»:

Հուլիսի 4-ին Կ. Պոլսի պատրիարք Սարգիս արքեպիսկոպոսը ժողով հրավիրեց, որը նույնպես մերժեց քաղաքային իշխանությունների միջնորդությունը: Հուլիսի 5-ին Բարձր դուռը պատրիարքարանին հրամայեց գերեզմանատան մի անկյունում տեղ հատկացնել հանգուցյալի համար: Պատրիարքին միջնորդությամբ դիմեցին նաև Անգլիայի և Ամերիկայի դեսպանները, որին ներկա էին Կ. Պոլսի հայ համայնքի երևելի դեմքերից Հովհաննես բեյ Տատյանը և Գրիգոր էֆենդի Օտյանը: Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետը, Հովհաննես Տատյանը և Գրիգոր Օտյանը գնացին գերեզմանատուն և հորդորեցին այնտեղ հավաքված հայությանը ընդառաջ գնալ դեսպանների միջնորդությանը: Հաջորդ օրը Պալատու թաղում լուր տարածվեց, որ բողոքականները հարձակվել են հայերի վրա, սպանել Սահակ վարդապետին և մի քանի այլ մարդկանց: Հազարավոր հայեր գնացին գերեզմանատուն, որոնց դեմ ռազմական նախարար Ռիզա փաշան դուրս բերեց կանոնավոր զորք՝ Ռեշիդ փաշայի գլխավորությամբ: Ընդհարում տեղի ունեցավ, 10-15 մարդ վիրավորվեց: Առավել մեծ արյունահեղությունը կանխեցին գերեզմանատուն հասած հայոց պատրիարք Սարգիս արքեպիսկոպոսը, Հովհաննես Տատյանը և Գրիգոր Օտյանը: Պատրիարքը հորդորեց պոլսահայությանը զիջել և թույլ տվեց, որ գերեզմանատան՝ իրենց ընտրած տեղում կայանա այդ բողոքականի թաղումը [17]: Այսպես այդ հակամարտությունը հաղթահարվեց, որում կարևոր դեր խաղաց դեսպան Հ. Բուլվերը: Կարևորելով դեսպանի դերակատարումն այդ կնճռոտ հարցի խաղաղ կարգավորման գործում՝ «Մասիսն» ամբողջությամբ տպագրում է Հ. Բուլվերի՝ հարգալից տոնով գրված հուլիսի 9-ի նամակը հայոց պատրիարքին, վերջինիս՝ հուլիսի 12-ին գրած նույնքան հարգալից պատասխան նամակը և դեսպանի՝ պատրիարքին հասցեագրած հուլիսի 17-ի շնորհակալական պատասխանը [18]: Նրա դերը նույնքան կարևորում է նաև Թիֆլիսում լույս տեսնող «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը, որը «Մասիսից» ամբողջությամբ արտատպում է այդ միջադեպի պատմությունը, Անգլիայի դեսպանի և Կ. Պոլսի պատրիարքի նամակները [19]:

Հ. Բուլվերի գործունեության տարբեր դրվագներին բազմիցս անդրադարձել է «Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս արարատյանը»: Թերթը հայտնում է, որ 1862 թ. դեկտեմբերի 30-ին նա անգլիական ռազմանավով Եգիպտոսից վերադարձել է Կ. Պոլիս: Նրա առողջությունը բարվոք վիճակում է, իսկ ներկայությունը մայրաքաղաքում «չկրնար անտարբեր բան մը ըլլալ հասարակութեանը համար»: Ովքեր լավ են ճանաչում «Մեծ Բրիտանիայի դեսպան վսեմափայլ» Հենրի Բուլվերին, գիտեն, թե «այս կենցաղագետ մեծաստիճան պաշտոնատարին գործակցութիւնը որչափ օգտակար է օսմանեան կառավարութեանը»: Որպես դրա հավաստում՝ թերթը հայտնում է, որ «Նորին վսեմութիւն» դեսպանը Կ. Պոլիս վերադառնալուն պես, հունվարի առաջին օրերին «պատիվ ունեցավ օգոստոսափառ Սուլթանին հետ տեսութիւն ընելու» [20]:

«Արշալույս արարատյանը» հայտնում է, որ Զմյուռնիայում անգլիական հյուպատոսարանի առաջին թարգման Ն. Մալուֆը հրատարակել է թուրքերեն-ֆրանսերեն բառարան, որը նվիրել է դեսպան Հենրի Բուլվերին: Գրքի ճակատային մասում պատկերված է «այս բարձրաստիճան պաշտոնատարին կենդանագիրը» [21]: Գիրքն ուներ առաջաբան՝ նվիրված Հ. Բուլվերին, որի հեղինակը Ն. Մալուֆն էր: «Արշալույս արարատյանը» գրքի առաջաբանը համարում է «համառօտ և իմաստալից խոսք» և թարգմանաբար տպագրում այն ամբողջությամբ: Դիմելով դեսպանին՝ Ն. Մալուֆը գրում էր. «Վսեմափայլ Տէր, Կրհամարձակիմ նուիրել ձեզ առաջիկայ բառարանս, քաջալերեալ ի բարեսէր վեհանձն զգացմանց ձերոց, որ գերագոյն աստիճանաւ երևելի կրհանդիսացնեն զձեզ և որ ամեն տեղ ջերմեռանդ համակրութիւններ կրգոյացնեն ձեր ազնուական անձին համար: Ձեր անուան պաշտպանութեանը ներքև դնելով այս աշխատասիրու-

թիւնս՝ չունեցած արժանաւորութիւնը այս կերպիւ կուտամ անոր: Իբրև մատենագիր՝ խորաքնին դիտող մի հանդիսացայք դուք, նմանապէս հաւատարիմ և ճարտարախօս նկարագրող, իսկ իբրև քաղաքագետ՝ ամենէն դժուար պաշտօններու մէջ այնպիսի հազուագիւտ յատկութեանց ապացոյցներ տուիք, որոնք կը դասեն զձեզ ի կարգս վսեմամիտ գերագոյն անձանց, որով իրաւամբ կը պարծենայ ձեր հայրենիքը:

Կրկին են պատճառները իմ այս հրապարակական յայտարարութեանս: Առաջինը՝ իմ ակնածական երախտագիտութիւնս է, տպաւորեալ սրտիս մէջ վասն այնչափ բարերարութեանց ընդունելոց, և վստահութիւնը որով հաճեցայք պատուել զիս որչափ ժամանակ որ ձեր վսեմութեան անձին յատկացեալ պաշտօնիս մը կը ծառայէի ձեզ: Երկրորդ պատճառն է ձեր հզօր հոգատարութիւնը վասն օսմանեան կայսրութեան՝ որ մեծապէս արժանի է ճշմարիտ կենցաղագէտ անձանց խնամոցը, և ձեր փութաքայլ յառաջադիմութիւնը թուրքերէնի մէջ:

Այս ուսումը, որուն վերայ ձեր նախորդները ամենևին հոգ չտարին և որ մեծամեծ դժուարութիւններով լեցուն է, ձեր սրամտութեանը առջև խաղալիկ կամ զբօսանք կը համարուի: Ձեր իմացական սքանչելի զօրութիւնը շուտով կը ցուցանէ ձեզ դթելը, որ կառաջնորդէ յիշեալ լեզուին դժուարութեանց Լաբիրինթոսին մէջ, որով և զարմանալի կորովամտութիւնը աշակերտին միշտ շփոթեց զփորձութիւնը վարժապետին: Ակնկալութեամբ թէ պիտի չմերժեք իմ մեծ երախտագիտութեանս այս տկար հարկը, կաղաչեմ հաճեցարուք ընդունիլ միանգամայն զհաւատիս բարձր համարմանս, խորին յարգանացս և անայլայլելի ակնածական սիրոյս, որով պատիւ անձինս համա իմ մնալ միշտ Ամենախոր ծառայ ձեր, Ն.ՄԱԼՈՒՖ» [22]: Բառարանի հեղինակի այս սրտառուչ խոսքը վկայում է այն մասին, թե որքան բարձր էր գնահատում անգլիական պաշտոնյան դեսպան Հենրի Բուլվերի գործունեությունը և ինչպիսի հարգանք ու ակնածանք էր տածում նրա անձի նկատմամբ:

Դեսպան Հ. Բուլվեր Լիթոնի հիմնած օթյակին անդամագրվել են 16 մահմեդական և 11 հայ ազատ որմնադիրներ: Հիմնադրման պահին օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ ընտրվել է Սերովբե Ազնավուրը [23]: Կ. Պոլսի մասոնության պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ անգլախոս օթյակի վարպետ ընտրվում էր ոչ թե անգլիացի, այլ հայ ազատ որմնադիրը: Դա Ս. Ազնավուրի անձի նկատմամբ դեսպան Հ. Բուլվերի ունեցած վստահության, հավատի ու հարգանքի վկայությունն էր: Օթյակի երևելի հայազգի անդամներից էր Թուրքիայում Սերբիայի դեսպանատան առաջին թարգման Թադեոս Թերխանը: 1866 թ. հունվարի 11-ին «Բուլվեր» օթյակին անդամագրվել է վաճառական Մարտիրոս Հարենցը, 1871 թ. հոկտեմբերի 12-ին՝ Բարձր դռան բարձրաստիճան պաշտոնյա Ասատուր էֆենդի Սարգսյանը, 1873 թ. մարտի 13-ին՝ հայտնի թատերական գործիչ Հակոբ Վարդովյանը, 1884 թ. դեկտեմբերի 9-ին՝ Տիրան Շամդանջյանը, 1888 թ. փետրվարի 7-ին՝ Կ. Պոլսի առևտրի պալատի հիմնադիրներից Սենեքերիմ Մանուկյանը [24] և ուրիշներ: Նրանցից ոչ բոլորի կյանքն ու գործունեությունն է մեզ հայտնի:

«Բուլվեր» օթյակի անդամներից ոչ ոք այնքան մեծ ներդրում չունի մասոնության տարածման գործում, որքան Ս. Ազնավուրը: Նա ծնվել է Կ. Պոլսում, հայ կաթոլիկ Ազնավուրյանների գերդաստանում, բարձրագույն իրավաբանական կրթություն ստացել Լոնդոնի և Մանչեսթրի համալսարաններում: Վերադառնալով հայրենի Կ.Պոլիս՝ նա 1846 թ. ապրիլի 1-ին իր նման Եվրոպայում կրթություն ստացած մի խումբ ուսյալ երիտասարդների հետ մասնակցել է «Համազգային ընկերության» հիմնադրմանը [25]: Ա. Ալպոյաճյանի բնութագրմամբ՝ «Անգլիագետ զարգացած հայ երիտասարդը» իր գրիչն այդ տարիներին օգտագործում էր «հայ ընտանիքների բարքերը ազնվացնելու համար» [26]:

Ս. Ազնավուրի ծանոթությունը մասոնության հետ տեղի է ունեցել Անգլիայում ուսումնառության տարիներին: 1854 թ. փետրվարի 17-ին նա Լոնդոնի «Հորդանան»

(«Jordan») թիվ 201 օթյակում ձեռնադրվել է ազատ որմնադիր, եղել է այս օթյակի կարևոր դեմքերից մեկը, դարձել բարձրաստիճան մասոն: Նա օթյակի վարպետ Սփուների առաջին տեղակալն էր [27]: Լոնդոնում գտնված ժամանակ նա «Ազդարար բյուզանդյան» թերթի խմբագիր-հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանի [28] հետ բացել է ենիչերիների վերաբերյալ թանգարան, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Թանգարանի այցելուների թվում եղել է նաև Անգլիայի Վիկտորիա թագուհին [29]:

«Հորդանան» օթյակից բացի Ս. Ազնավուրն անդամագրվել է նաև Մանչեսթրի «Odd Fellows» եղբայրական գաղտնի ընկերությանը [30], որը Միացյալ թագավորությունում 19-րդ դարի ամենախոշոր և ամենահարուստ եղբայրական կազմակերպությունն էր: Նա փափագում էր զուտ հայկական օթյակ ստեղծել, որն իր շարքերում կհամախմբեր մայրաքաղաքի առաջադեմ հայ երիտասարդ մտավորականներին ու «եվրոպականացած» վաճառականությանը: Այդ նպատակի իրականացման առաջին քայլը եղավ 1862 թ. հունվարի 25-ին Կ. Պոլսում «Հայկ» կամ «Օրիոն» անվանումով հայկական եղբայրական միության ստեղծումը, որը Մանչեսթրի «Odd Fellows» գաղտնի ընկերության մասնաճյուղն էր [31]:

Կ. Պոլսում «Odd Fellows»-ի հայկական մասնաճյուղ ստեղծելու գաղափարի հեղինակը դեսպան Հ. Բուլվեր Լիթթոնն էր, իսկ «Հայկ» («Օրիոն») միության հիմնադրման նախաձեռնողը և անմիջական կազմակերպիչը՝ նրա հետ սերտ կապեր ունեցող Ս. Ազնավուրը: Նա գիտակցում էր, որ Կ. Պոլսի ավանդապահ և պահպանողական համայնքը միանշանակ չի ընկալելու իր հիմնած մասոնական բնույթ ունեցող ընկերության ստեղծումը, ուստի ձգտում էր հանրությանը «Հայկ» («Օրիոն») միությունը ներկայացնել բացառապես որպես բարեգործական: Այդ հարցում նրան աջակցում էր «խմբագրական ասպարեզին մէջ արդյունաւոր և պատվավոր դիրք մը ունեցած» [32] «Մասիս» թերթի մասոն խմբագիր Կարապետ Յութուճյանը (1823-1904): Նա Կ. Պոլսում 1862 թ. նոյեմբերի 24-ին հիմնված ֆրանսախոս «Արևելքի միություն» («L'Union d'Orient») օթյակի անդամ էր, իսկ 1866թ. անդամագրվել է հայկական «Սեր» օթյակին [33]: Առաջադիմասեր և ազատամիտ Կ. Յութուճյանն իր թերթում հնարավորություն տվեց Ս. Ազնավուրին ազատ հանդես գալ «Odd Fellows» և «Հայկ» եղբայրական ընկերությունների բնույթը, նպատակներն ու գործունեությունը ներկայացնող և մասոնությունը քարոզող հոդվածներով [34]: Դրանցում բացահայտվեցին բարձրաստիճան մասոն Ս. Ազնավուրի խոր գիտելիքները ազատ որմնադիրների «ընկերության բարեհռչակ էութիւնը, աստուածավախ օրէնքը, ազնիւ ընթացքը, մարդասէր գործողութիւնները եւ այդ ընկերութիւնները կազմող անձանց յարգն ու պատիվը» [35]: Այդ հրապարակումներում Ս. Ազնավուրը միաժամանակ «խոհեմ և քաղաքավարի ոճով» [36] պատասխանում էր մասոնության և «Հայկ» («Օրիոն») ընկերության վերաբերյալ ազգային պահպանողական գործիչ, Կ. Պոլսի խավարամիտների առաջնորդ «Երևակ» թերթի խմբագիր Հ. Չամուռճյան Տերոյենցի «սևամաղձ գրչից» դուրս եկած «ցատռտունքներուն» [37]:

Ս. Ազնավուրը 1850-1860-ական թվականների ազգային այն պրագմատիկ գործիչներից էր, ով մեծ հույսեր չէր կապում սահմանադրական շարժման հետ: Նա չէր կիսում Կ. Պոլսի այն մտավորականների ու սահմանադրականների ոգևորությունը, ովքեր գտնում էին, թե ազգային սահմանադրության ընդունումով հայերը կարող են «զորաւոր ազգերի շարքին դասուիլ» [38]:

1860 թ. մայիսի 24-ի սահմանադրության գործողության մեջ դրվելուն պես շատերին պարզ դարձավ, որ Նահապետ Ռուսինյանի մկրտած «Ազգային սահմանադրության» փառավոր տիտղոսով» [39] փաստաթուղթն իրականում ներքին ինքնավարության օրենք էր, հայ համայնքի և եկեղեցու գործերը կարգավորող կանոնադրություն, ոչ ավելին: Այդ «խաբուսիկ ու բարձրագոչ անունով» [40] փաստաթուղթը չէր ապահովում արևմտահայության իրավունքները, չէր արդարացնում նրանց հույսերը, սպասումները և ակնկալությունները: Արևմտահայությունը հուսախաբություն ապրեց նաև Անգլիայի

դեսպան Հ. Բուլվեր Լիթթոնի միջնորդությամբ սուլթան Աբդուլ Ազիզի՝ մարտի 17-ի շնորհած սահմանադրությունից, որի «ազդեցութիւնը խիստ փանաքի եղաւ» [41]: Այն խոր հիասթափություն և հուսալքություն առաջ բերեց արևմտահայ սթափ մտածող քաղաքական ու հասարակական գործիչների և հատկապես հայ մասոնների շրջանում: Ազգային սահմանադրության առաջացրած համընդհանուր հուսահատությունը, Կ. Պոլսում ստեղծված «բարոյական հեղձուցիչ մթնոլորտը» [42] հաղթահարելու, հայությանը գոտեպնդելու, ուժ և ազգային ոգի հաղորդելու միակ միջոցը Ս. Ազնավուրը համարում էր մասոնության գաղափարները տարածելը և հայկական օթյակներ ստեղծելը:

Կ. Պոլսում հայկական «Հայկ» («Օրիոն») ընկերության ստեղծումից ամիսներ անց՝ 1862 թ. հոկտեմբերի 23-ին, հիմնվեց «Union d´ Orient» («Արևելքի միություն») ֆրանսախոս օթյակը, որի հիմնադիրները մի խումբ ֆրանսիացիներ և հայեր էին: Շաբաթներ անց այս օթյակին անդամագրված Սերովբե Ազնավուրը 1863 թ. դեկտեմբերի 29-ին ընտրվեց օթյակի Առաջին Վարպետ: 1864 թ. հունվարի 14-ին նա երդում տվեց՝ որպես օթյակի Գերհարգելի Վարպետ և պաշտոնավարեց մեկ տարի: Այդ ընթացքում Ս. Ազնավուրի շնորհիվ օթյակը բավականին առաջադիմեց, անդամների թիվը հասավ 65-ի, որից 12-ը պոլսահայ մտավորականներ ու գործիչներ էին: 1863 թ. ձմռանը Ս. Ազնավուրն ընտրվեց Կ. Պոլսում հիմնված անգլիական «Star of the East» («Արևելքի Աստղ») օթյակի Առաջին Վարպետ: 1864 թ. փետրվարի 5-ին Ս.Ազնավուրի առաջարկությամբ և Հենրի Բուլվեր Լիթթոնի համաձայնությամբ հանդիսավոր նշվեց «Արևելքի Աստղ» և «Հայկ» («Օրիոն») օթյակների հիմնադրման տարելիցը [43]: Ս. Ազնավուրի և Հ. Բուլվեր Լիթթոնի համագործակցության արդյունքում և նրանց անմիջական նախաձեռնությամբ 1864 թ. ապրիլի 27-ին Զմյուռնիայում հիմնվեց հայ մասոնության պատմության մեջ առաջին հայկական «Տիգրան» թիվ 1014 օթյակը [44]: Այս օթյակի ստեղծումով Ս. Ազնավուրի հեղինակությունն էլ ավելի բարձրացավ հայ ազատ որմնադիրների շրջանում՝ նրան դարձնելով հիրավի «կարկառուն դէմք մը Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ» [45]: Մասոնության շրջանում Ս. Ազնավուրի ունեցած մեծ հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ նրա միջնորդությամբ «Իռլանդիայի Մեծ Օթյակը» Կ. Պոլսում բնակվող իռլանդացիներին թույլ տվեց իրենց օթյակն ունենալ և հիմնեց «Leinster» («Լինսթեր») թիվ 166 իռլանդական օթյակը [46]:

1866 թ. փետրվարի 22-ին Ս. Ազնավուրի նախաձեռնությամբ որոշվեց «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հովանու ներքո Կ. Պոլսում հիմնել հայկական «Սեր» օթյակ: 1866 թ. մարտի 2-ին Ս. Ազնավուրը «Ֆրանսիայի Մեծ Արևելքին» տեղեկացրեց, որ «Սեր» օթյակին անդամագրված բոլոր 18 հայ ազատ որմնադիրները ֆրանսիական «Արևելքի Միություն» օթյակի անդամներ են: «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի Գերագույն խորհրդի արտոնագրի համաձայն 1866 թ. մայիսի 7-ին Կ. Պոլսում՝ Պերա թաղամասում գտնվող իտալական «Italia Risorta» օթյակի դահլիճում, տեղի ունեցավ «Սեր» օթյակի հանդիսավոր բացումը: «Սեր» օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ ընտրվեց Ս. Ազնավուրը [47]:

1867 թ. փետրվարին Ս. Ազնավուրը «Սեր» օթյակում նշեց Միքայել Նալբանդյանի մահվան տարելիցը, որի ժամանակ հուզիչ ճառով հանդես եկավ «Տիգրան» օթյակի անդամ Մատթեոս Մամուրյանը [48]: Տարեվերջին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հետ ունեցած գաղափարական տարաձայնությունների պատճառով Ս. Ազնավուրը հրաժարվեց «Սեր» օթյակի Գերհարգելի Վարպետի պաշտոնից, բայց 1869 թ. կրկին ընտրվեց այդ պաշտոնում [49]:

1870-ական թվականներին ազգային երեսփոխան Ս. Ազնավուրը Կ. Պոլսում հասարակական և ազգանպաստ ակտիվ գործունեություն էր ծավալում: 1878 թ. փետրվարին, երբ անգլիական քաղաքական գործիչ Ջեյմս Բրայսը հանդես եկավ արևմտահայությանը ինքնավարություն շնորհելու պահանջով, ոգևորված դրանից՝ «Սեր» օթյակի բարձրաստիճան մասոններ Ս. Ազնավուրը, Տ. Յուսուֆյանը, Հ. Մերեմ-Գուլին և Հ.

Նորատունկյանը նրան շնորհակալական նամակ հղեցին: Մի քանի շաբաթ անց Ս. Ազնավուրը նաև անձնական նամակ հղեց Զ. Բրայսին, որտեղ հայտնում էր, որ «հայ ժողովուրդը իր բարօրութեան եւ յառաջադիմութեան համար անգլիական հովանաւորութիւնը կնախընտրե» [50]:

1879 թ. հոկտեմբերի 28-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում Ս. Ազնավուրը Մաղաքիա Օրմանյանի և մի խումբ այլ անվանի հայորդիների հետ միասին Ներսես պատրիարք Վարժապետյանի օրհնությամբ դարձան Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ: Նրա վերադարձը մայր եկեղեցի սրտառուչ խոսքերով ողջունեցին «Սեր» օթյակի երևելի անդամներ բժշկագիտության դոկտոր Ստեփան փաշա Ասլանյանը և դատավոր Տիգրան Յուսուֆյանը [51]: 1880 թ. հոկտեմբերի 31-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը վարչական խորհրդի դատական գործերի խորհրդական ընտրեց Ս. Ազնավուրին [52], ով հետագա տարիներին բարեխղճորեն կատարեց իր վրա դրված պարտականությունները: Իր գիտակցական ողջ կյանքի ընթացքում շուրջ 50 տարի Ս. Ազնավուրը հավատարմորեն ծառայեց մասոնությանը՝ դառնալով Կ. Պոլսում և Զմյուռնիայում ազատ որմնադիրների գաղափարների հիմնական տարածողներից մեկը: Դրա վկայությունն այն է, որ Կ. Պոլսում գործող եվրոպական յոթ օթյակներից հինգը հիմնվեց նրա անմիջական ջանքերով կամ նախաձեռնությամբ [53]: Հայ մասոնությանը Ս. Ազնավուրի մատուցած ծառայությունը հայկական «Սեր» օթյակի ստեղծումն է, որը հայ մասոնության պատմության մեջ ուրույն տեղ ունի: Այդ օթյակը նա հիմնեց ոչ թե «խավարյալների ու լուսավորյալների», «ներսեն - դուրսենների», «աջակողմյանների ու ձախակողմյանների» պայքարը շարունակելու, այլ ամենից առաջ ազգային միություն, համերաշխություն, եղբայրություն, լուսավորություն և առաջընթաց ապահովելու համար: Ս. Ազնավուրի անմիջական ջանքերով ձևավորվեց երիտասարդ մտավորականների մի ամբողջ սերունդ, ովքեր դարձան եվրոպական արժեքների և առաջադիմության գաղափարակիրներ: Նրանց թվում էին նաև իր երկու զավակները: Նրա ավագ որդի Անթուանը (1844-1867), չնայած երիտասարդ տարիքին, «Արևելքի Միություն» օթյակի վարպետ էր [54], իսկ կրտսեր որդի Հովսեփը (1854-1938), ով հայտնի ճարտարապետ էր, մասոն ձեռնադրվեց 1791 թ. դեկտեմբերի 26-ին իտալական «Italia Risorta» օթյակում [55]:

«Բուլվեր» օթյակի երևելի դեմքերից մեկը թատերական գործիչ ***Հակոբ Վարդովյանն*** *(1840-1898) էր: Նրա առաջին շփումը թատրոնի հետ տեղի է ունեցել 1861 թ. դեկտեմբերի 14-ին Կ. Պոլսում, երբ «Արևելյան թատրոնում» դիտել է հայերեն առաջին ներկայացումը՝ «Երկու հիսունապետեր» պիեսը և «Անծանոթը» կատակերգությունը [56]: Ներկայացումից տպավորված՝ երիտասարդ Հ. Վարդովյանը հաջորդ օրը դիմել է թատրոնի ղեկավարությանը՝ խնդրելով իրեն ընդգրկել խմբի կազմում: Նրա անունն առաջին անգամ հիշատակվում է «Արևելյան թատրոնի» 1862 թ. թատերաշրջանի ավարտի կապակցությամբ «Մեղու» թերթում տպագրված հոդվածում: Ըստ թերթի՝ մայիսի 5-ին բեմադրվել է Վիկտոր Հյուգոյի «Արքայն զբոսնու» պիեսը: Այդ ներկայացման ժամանակ բեմ է բարձրացել նաև Հակոբ Վարդովյանը, որի խաղի մասին «Մեղուն» գրում է. «Յուր դերը, կրնամք ըսել, որ անթերի լըցուց … առաջին դերասանական քայլին մէջ. Ասիկա պ. Հ. Գ. Կյուլլյուլյան աշխոյժ երիտասարդն էր, որ նոր մտած է այս ասպարեզին մէջ, և փորձով ցույց տուաւ, որ թատրոնի տնօրինութիւնը զանի ընտրելուն մէջ սխալած չէ» [57]:*

Այդ օրվանից սկսվեց նրա կապը թատրոնի հետ, որը տևեց 36 տարի: Այդ տարիներին Հ. Վարդովյանը դարձավ Կ. Պոլսի բազմազգ բնակչության շրջանում բավականին ճանաչված, նույնքան ընդունված և գնահատված թատերական գործիչ, դերասան և բեմադրիչ: Նրան բարձր են գնահատել հատկապես թուրքական իրականությունում, արժանին հատուցել նրա թատերական գործունեությանը և ներդրմանը՝ որպես թուրքական թատրոնի հիմնադիր: Նույն գնահատականը Հ. Վարդովյանը չի ստացել ժա-

մանակի արևմտահայ գրական և թատերական գործիչների, ինչպես նաև հայ թատրոնի պատմությունն ուսումնասիրողների կողմից: Հայ թատրոնի գիտակ Շարասանը (Սարգիս Թյությունջյան) նրա գլխավորած թատերախմբի մասին գրել է ընդամենը հինգ էջ [58]: Հրանտ Ասատուրը նրան առհասարակ չի անդրադարձել, իսկ հայ թատրոնի մյուս գիտակները հավանություն չեն տվել նրա գործունեությանը: Արշակ Չոպանյանը նրա մասին գրում է. «Վարդովյան, ճարպիկ ռեժիսոր, միջակ դերասան, անզարգացած միտք, կոպիտ ու շահամոլ նկարագիր, այդ նոր ուղղութեան գլուխ կանգնելով՝ մեծ վնաս հասցուց զուտ հայկական թատերական շարժումին» [59]: Սմբատ Դավթյանը նույնպես հավանություն չի տվել Հ. Վարդովյանի գործունեությանը՝ գտնելով, որ նա, նպաստելով թուրքական թատրոնի զարգացմանը, դրանով իսկ նախապատրաստել է «հայ ազգային բեմի անկումը» [60]: Հ. Վարդովյանի նկատմամբ եղած անտարբերությունը, ինչ-որ տեղ նույնիսկ արհամարհանքը խոր արմատներ ունի: Դա պայմանավորված է նրանով, որ իր ժամանակի ամենատաղանդավոր բեմադրիչներից մեկը ծառայել է ոչ թե հայ թատրոնին ու բեմին, այլ ստեղծագործական ամբողջ ուժերը ներդրել է թուրքական թատրոն ստեղծելու գործում: Հ. Վարդովյանին վատաբանողները և այպանողները նրա նկատմամբ հակակրանքը, ատելությունն ու թշնամանքը պայմանավորել են նրանով, որ կյանքի վերջին տարիներին նա իբր մահմեդականություն է ընդունել:

Այս վարկածին հավատում էր նաև հայ մասոնության գիտակ Ռուբեն Բերբերյանը: Նա Հ. Վարդովյանին անվանում է «թրքասեր», ով իր դերասան ընկերների հետ «կարճ ժամանակուան մէջ պղծեցին հայ բեմը, ջախջախեցին նորակառույց, բայց դեռ թոյլ հայ գաղափարական թատրոնի սիւները, փոխարինեցին հայ լեզուն թրքական լեզուով և հայ բեմը ողողեցին թրքական բարքեր նկարագրող զաւեշտներով ու օփեռեթներով» [61]: Ռ. Բերբերյանը դրսևորում է ծայրահեղ անհանդուրժողականություն Հ. Վարդովյանի՝ հային ոչ վայել արարքի համար: Ըստ նրա՝ Հ. Վարդովյանի «թրքասիրութիւնը այն աստիճանի էր հասած, որ մինչև իսկ իր ազգանունը փոխած էր «Կիւլիւլի» [62]: Եթե Հ. Վարդովյանն իսկապես փոխել է ազգանունը, ապա մենք գործ ունենք հայ թատրոնի պատմության թերևս ամենատխուր, անպատվաբեր և ամոթալի դրվագներից մեկի հետ: Բայց անգամ այս պարագայում մենք չենք կարող հայ մշակույթի պատմությունից իսպառ դուրս թողնել կամ լիովին անտեսել տասը տարուց ավելի հայ բեմը կանգուն պահած մի մեծ թատերախմբի գործունեությունը: Թատերախումբ, որ հայ թատրոնի պատմության մեջ ընդմիշտ մտել է «Վարդովյանի թատերախումբ» անունով:

«Մեղու» թերթի 1862 թ. մայիսի 10-ի համարում տպագրված հոդվածը հիմնովին հերքում է Հ. Վարդովյանի՝ ազգանունը փոխելու մասին տարածված անհիմն լուրերը: Թերթը թատրոնում առաջին դերը կատարած 22-ամյա Հ. Վարդովյանին ներկայացնում է հայկական ազգանունով՝ Հ.Կյուլլյուլյան և ոչ Գյուլլու, ինչպես հետագայում նրան անվանում էին թուրքերը: «Մեղու» թերթի հրապարակումը հերքում է այն պնդումը, թե թուրքացման հակված Հ. Վարդովյանն իր ազգանունը թարգմանել է թուրքերեն և դարձել Գյուլլու: Մինչդեռ իրականում տեղի է ունեցել ճիշտ հակառակը. նա իր թուրքական արմատով Կյուլլյուլյան (Գյուլլուլյան – գյուլլու – թուրքերեն՝ վարդ) ազգանունը «սահմանադրական տարիների խանդավառ մթնոլորտում թարգմանել է հայերեն, դարձել Վարդովյան, բայց թուրքերը շարունակել են կոչել նախկին ձևով» [63]:

Մինչ Հ.Վարդովյանի ժամանակակիցներից ոմանք ժխտել են նրա անուրանալի դերը հայ թատրոնի պատմության մեջ, նրան ըստ արժանվույն գնահատել է հայ մեծանուն երգիծաբան Հակոբ Պարոնյանը: Նա ոչ միայն Հ. Վարդովյանի ժամանակակիցն էր, նրա թատերական գործունեության ականատեսը և ներկայացումների հանդիսատեսը, այլև նրա տաղանդը գնահատողն ու արժևորողը: Նա գրում է. «Ճշմարտութիւնը խոսելով՝ Վարդովեանի անխոնջ և անվհատ աշխատութեան շնորհիվ է, որ ազգն այսօր թատրոն մը ունի» [64]: Սա գրում է Հ. Պարոնյանը, ով առանց չարամտության և

նենգափոխության քննադատում էր Կ. Պոլսում տիրող հոռի բարքերը, ներկայացնում «մեծապատիվ մուրացկաններին», իսկ «Ազգային ջոջերում»՝ հայ հասարակական կյանքի և մտքի ներկայացուցիչներին, նրանց խոցելի և արտասովոր կողմերը: Հ. Պարոնյանը, չնայած բարձր է գնահատել Հ. Վարդովյանի անձնական ներդրումը հայ թատրոնի զարգացման գործում, բայց «Ազգային ջոջերում» նրան նույնպես քննադատել է: Նա բացահայտել է Հ. Վարդովյանի բացառիկ շահամոլությունը, կեղծելու սովորությունը, անսկզբունքայնությունը, փոքր խելքի տեր մարդ լինելը: Հ. Պարոնյանը նրա մասին գրում է. «Վարդովեան էֆենդին ամեն բանեն կուզե իրեն շահ հանել: Վեհանձնութիւնը կը սիրե, բայց չի գործածեր… ուղեղով փոքր մարդ մէ: Դեմքէն չարութիւն մը, չերևար, բարութիւն ալ չգուշակվիր» [65]:

Անկախ այն բանից, թե կյանքում ինչ մարդ էր Հ. Վարդովյանը, աներկբա է մի բան. նա ուներ թե՛ համախոհներ և թե՛ հակառակորդներ: Թատերական աշխարհի որոշակի շրջանակից դուրս նա գնահատված և պահանջված մարդ էր մասոնների շրջանում: Սկզբում նա ֆրանսիական օթյակի անդամ էր, այնուհետև 1866 թ. անդամագրվեց հայկական «Սեր» օթյակին՝ ի թիվս Կ. Պոլսի երևելի շատ հայ գործիչների: Եթե նա արժանիքներ չունենար, ապա ազատ որմնադիրները նրան իրենց եղբայրական ընկերության անդամ չէին դարձնի: Սա շատ խոսուն փաստ է՝ հօգուտ Հ. Վարդովյանի: Վերջապես, անուրանալի է նրա նվիրումը և ծառայությունը հայ թատրոնին: Նա տարիներ շարունակ իր ուժերի ներածին չափ անմնացորդ ծառայել է հայ բեմին: 1863 թ. մեկնել է Զմյուռնիա և «Վասպուրական» ազգային թատրոնի ուժերից ստեղծել թատերախումբ, անցկացրել փայլուն թատերաշրջան: 1865 թ. Հ. Վարդովյանը, հայ թատրոնի ճակատագրով մտահոգված, մի խումբ համակիրների հետ մեծագույն ջանքեր է թափել «Արևելյան թատրոնի» ուժերը համախմբելու և ազգային բեմը վերակենդանացնելու համար: Այդ նպատակով նա մի խումբ համախոհների հետ 1865 թ. Կ. Պոլսում «Արևելյան դերասանական խմբին աւերակաց բեկորներուն վրա» [66] ստեղծեց «Ասիական ընկերությունը», որը 1866 թ. ձմռանն սկսեց իր ներկայացումները: 1867-1869 թթ. թատերաշրջանում այս խումբը պարզապես փայլեց իր արհեստավարժությամբ մերթ Նաումի, մերթ էլ «Օսմանյան թատրոնի» բեմերի վրա [67]:

1867 թ. գարնանը «Ասիական ընկերությունը» Հ. Վարդովյանի ղեկավարությամբ բեմադրել է մի քանի հաջողված ներկայացումներ, «Արևելյան թատրոնում» նշել է Միքայել Նալբանդյանի մահվան առաջին տարելիցը, որի հիմնական կազմակերպիչները եղել են հայ մասոնները: Երեկոյի ընթացքում Հ. Վարդովյանի և «Արևելյան թատրոնի» ղեկավար, դրամատուրգ, դերասան, Կ. Պոլսի «Արևելյան» («Oriental») օթյակի վարպետ Սրապիոն Հեքիմյանի [68] (1832-1892) ջանքերով բեմադրվել է «Սեր» օթյակի անդամ Ռոմանոս Սետեֆճյանի [69] (1837-1905) «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» հայրենասիրական պիեսը [70]:

1868 թ. «Ասիական ընկերության» հովանավորությամբ Հ. Վարդովյանը սկսում է ներկայացումներ տալ: Խումբը ցրվելու վտանգի տակ չդնելու նպատակով, մասամբ նաև թուրք մտավորականության խնդրանքով նա սկսել է թուրքերեն ներկայացումներ բեմադրել: 1868 թ. Հ. Վարդովյանը Կ. Պոլսի Կետիկ փաշա թաղամասում «Արևելյան թատրոնի» ուժերով ստեղծել է արհեստավարժ նոր թատերախումբ: Թուրքական աղբյուրները նոր թատերախումբը անվանել են «Թատրոն Օսմանիե» («Օսմանյան թատրոն») կամ «Կետիկ փաշայի թատրոն»: Այս կապակցությամբ «Ծիածան» թերթն իրավացիորեն գրում է. «Վարդովյան հանուն ազգային յառաջադիմութեան՝ թատրոնի վերակենդանութեան համար ուխտած ազգը յավիտեան փառավոր թատրոնի մը տէր ընելու ճգամբ անդադար կը ջանա, կը տգնի, կը քրտնի, կը վազե, կը խորհի, կը զոհե, կը զոհվի և խաչ կելլա, նունիսկ դերասանական խմբին ապագան ապահովելու փափաքանոք միջոցներ կը խորհի» [71]:

Հ. Վարդովյանի կազմակերպչական ահռելի ջանքերի լավագույն վկայություններից մեկն այն է, որ նա ֆրանսիացի Սյուլիեի կառուցած կրկեսի շենքը վարձակալեց և հիմնովին վերափոխելով՝ երեք հարկի վրա կառուցեց քառասունից ավելի օթյակ, շենքը ներսից հիմնովին հարմարեցրեց թատրոնի համար: Շահամոլի համբավ վաստակած Հ. Վարդովյանը շռայլ ծախսեր է կատարել իր մոտ հազար հանդիսատես տեղավորող թատրոնին հնարավորինս շատ եվրոպական տեսք տալու համար: Նա հսկայական ծախսեր է կատարել ներկայացումները գովազդելու համար, հայերեն և թուրքերեն հրատարակել է տվյալ թատերաշրջանի ծրագիրը, խմբի կազմը: Յուրաքանչյուր ներկայացման օրը հանդիսականներին բաժանվել է տվյալ օրվա ծրագիրը, ամեն թատերաշրջանի սկզբում բացել բաժանորդագրություն:

Հ. Վարդովյանը կազմակերպչական բացառիկ կարողությունների տեր անձնավորություն է եղել, ում աշխատասիրությունը և եռանդը չեն ժխտել նույնիսկ նրա նկատմամբ հակակրանք ունեցող մարդիկ, անգամ հակառակորդները: Շարասանի բնութագրմամբ՝ նա հանգիստ նստել չգիտեր, ցանկացած խնդիր և առաջացած դժվարություն անմիջապես հաղթահարում էր, գտնում վիճակից դուրս գալու ելք, «տիրապետում էր ամէնուն հաճոյակատար ըլլալու գաղտնիքը», միաժամանակ «այլոց տկար կողմերն ալ շահարկելու չէր խղճահարիր»: Թատրոնի բոլոր հոգսերը «իր վրա կծանրանար, նոյնիսկ ատեն կը գտներ մամուլին դիտողութեանցը և հարգանքներուն պատասխանելու» [72]: Նույնքան հաջողությամբ նա կարգավորել է թատրոնի հետ առնչվող ցանկացած հարց նաև օսմանյան իշխանությունների հետ: 1869 թ. Հ. Վարդովյանը, որպես թատրոնի վարչության ղեկավար, մեծ վեզիր Ալի փաշայի աջակցությամբ թուրքական իշխանություններից ստացել է տասը տարվա գործունեության պետական մենաշնորհ՝ պայմանով, որ ներկայացումները պետք է տրվեն հայերեն և թուրքերեն: Դա բացառիկ առանձնաշնորհ էր, որ տրվել է, թուրքահպատակ հայի: 1869 թ. սկսած, առաջին երեք թատերաշրջաններում թուրք հասարակության պահանջով «օսմանյան թատրոնը» ներկայացրել է բացառապես թուրքերեն ներկայացումներ:

Հ. Վարդովյանն այդ քայլին գնացել է երկու պատճառով: Նախ՝ նա դրանով ցանկացել է, որ թուրքական իշխանություններն իր թատրոնը վերցնեն հովանավորության տակ: Երկրորդ՝ թուրք ժողովրդին մատչելի ներկայացումներ բեմադրելով՝ ֆինանսական աղբյուր ապահովել: Երկու դեպքում էլ նա իր նպատակին հասավ, որովհետև տասը տարով արտոնագիր ստացավ, իսկ թուրք հասարակությունը «ցնծագին խանդավառութեամբ վերաբերուեցավ թատրոնին» [73]:

Թուրք ճանաչված դրամատուրգներ Նամըք Քեմալը, էպպու Զիա Թեվֆիքը, Նազըմը, Սիմեդ Միտհադը իրենց ստեղծագործությունները Վարդովյան թատրոնի բեմ հանեցին: Չնայած դրան՝ Հ. Վարդովյանը երբեք չի հրաժարվել հայ դրամատուրգների ստեղծագործությունները բեմադրելուց: Այդ տարիներին նա բեմ է հանել նաև Մ. Պեշիկթաշլյանի, Թ. Թերզյանի, Պ. Դուրյանի, Ռ. Սետեֆճյանի, Խ. Գալֆայանի, Ս. Թղլյանցի պիեսները, բեմադրել է «Տիգրան Մեծ» պիեսը, «Լևոն Ա», «Արտաշես աշխարհակալ» պատմական ողբերգությունները:

Հ. Վարդովյանը հաջողությամբ ներկայացրել է նաև եվրոպական հեղինակների ստեղծագործությունները: 1870-ական թվականներին Հ. Վարդովյանի թատրոնը «շատ փառաւոր վիճակի» մեջ էր, որը «ամէն կերպով կրնար մրցիլ եվրոպական ժամանակակից լաւագոյն բեմերու հետ» [74]: Հ. Վարդովյանը Կ. Պոլսում սկզբնավորել է օպերային թատրոնը: 1872 թ. դեկտեմբերի 17-ին նա հանդիսավոր պայմաններում ներկայացրել է Տիգրան Չուխաջյանի «Արիֆ» օպերետը: Չբավարարվելով դրանով՝ նա Փարիզից հրավիրել է երգչուհիներ, դիրիժոր, ներկայացրել է ֆրանսիացի կոմպոզիտորներ ժակ Օֆենբախի և Շառլ Լեքոքի օպերետները: Վարդովյան թատրոնն իր գործունեության 15 տարիների ընթացքում բեմադրել է մոտ 100 պիես: Թատերախմբի խաղացանկի մեծությունը պահանջել է ֆինանսական մեծ ծախսեր, որը Հ. Վարդովյանը

հաջողությամբ լուծել է իր մասոն եղբայրների հետ: 1870-ական թվականների կեսերին ստեղծվել է շահաբաժիններով գործող մի ընկերություն, որի մեջ մտել են ամենամեծ շահաբաժին ունեցող Հ. Վարդովյանը և թուրք մասոններ, «Նոր օսմաններ» գաղտնի ընկերության երևելի դեմքերից արդարադատության նախարար Մուստաֆա Ֆազլ փաշան, գրող, դրամատուրգ Նամըկ Քեմալը, Տրապիզոնի նախկին կուսակալ Ալի բեյը [75]: Թատրոնի կառավարիչը Հ. Վարդովյանն էր: Հ. Վարդովյանի համագործակցությունը թուրք մասոնների հետ տվյալ դեպքում ոչ թե գաղափարական կամ ստեղծագործական բնույթ է կրել, այլ հետապնդել է շահույթ ստանալու նպատակ: Այնպես որ, այս հարցում էլ ամենակարող Հ. Վարդովյանը ձեռքերը ծալած չի նստել: Հ. Վարդովյանին այս հակազգային կեցվածքի պատճառով թեև «քննադատողներ գտնուեցան, սակայն ինք դրամ շահելու ապահով ճամբան գտած ըլլալով ոչ մէկ կերպով տեղի տուաւ» [76]: Սակայն հանուն ճշմարտության պետք է ասել, որ այս ընկերության ստեղծումից շահել է նաև թատերախումբը: Կ. Պոլսում գործող բոլոր թատրոնների մեջ ամենաբարձր վարձատրությունը ստացել են Վարդովյանի թատերախմբի անդամները [77]:

Վարդովյան թատրոնն ունեցել է 70-ից ավելի դերասան-դերասանուհիներ, մի քանի բեմադրիչ, պարուսույց, քսան հոգուց բաղկացած նվագախումբ, որը ղեկավարել են Գ. Սինանյանը և իտալացի երգահան Կառլո Ֆոսքինին: Հնարամիտ Հ. Վարդովյանը Բերա թաղամասի հայ հարուստ ընտանիքների կանանց թատրոն բերելու համար նրանցից սկզբնական շրջանում մուտքի վճար չի վերցրել: Թուրք կանանց ներկայությունը թատրոնում ապահովելու նպատակով նա պատրաստել է տվել վարագույրներով ծածկված հատուկ վանդակներ: Դրանց մեջ նստած թրքուհիները, առանց իրենց դեմքը ցույց տալու, վարագույրների արանքից դիտել են ներկայացումը: Վարդովյանի թատրոնում իրենց օթյակներն ունեին օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաները: Վարդովյան թատրոնը նրա կազմակերպչի ու ղեկավարի «անխոնջ ու անվհատ աշխատութեան շնորհիվ» [78] տասը տարի շարունակ Մերձավոր Արևելքի ամենամեծ ու կայուն ծրագրով գործող թատերախումբն էր: Վարդովյանի թատերախումբն իր արհեստավարժությամբ և գեղարվեստական բարձր մակարդակով 1876 թ. զարմացրել և հիացրել է անգլիական հայտնի դիվանագետ, քաղաքական գործիչ և ապագա վարչապետ լորդ Սոլսբերիին: 1888 թ. նա հեղինակել է «Խռովք հոգվույս» բանաստեղծությունների ժողովածուն: Առանց Հ. Վարդովյանի հազիվ թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան, ինչը չեն ժխտում թուրք պատմաբանները, բանասերներն ու թուրքագետները: Նրան բարձր են գնահատել թուրքական իշխանությունները, թույլատրել են մինչև կյանքի վերջն ապրել պալատում, հուղարկավորել Բեշիքթաշ Յահյա էֆենդի գերեզմանատանը:

«Բուլվեր» օթյակի անդամ Սենեքերիմ Մանուկյանը (1824-1908) կարևոր դեմք էր Կ. Պոլսի տնտեսական և առևտրական կյանքում: Նա մանուֆակտուրային տնտեսության հմուտ կազմակերպիչ էր, վաճառականության ակտիվ նախաձեռնող, եվրոպական երկրների հետ ուղղակի հարաբերություններ հաստատած ձեռներեց: Նա Կ. Պոլսի Առևտրական պալատի հիմնադիրներից էր, որտեղ սկզբում վարում էր առաջին խորհրդականի պաշտոնը: Դառնալով այդ պալատի ղեկավարը՝ Ս. Մանուկյանը մասնաճյուղեր է ստեղծել Լոնդոնում, Մանչեսթրում և Բաղդադում: Ս. Մանուկյանը տնտեսական և առևտրական գործունեությանը զուգահեռ հասարակական ակտիվ աշխատանք էր տարել: Վ. Զարդարյանի բնութագրմամբ՝ «Ազգային շրջանակին մէջ իր ծառայութիւններն անմոռանալի են» [79]: 1852 թ. նա Կ. Պոլսի Գերագույն ժողովի կողմից նշանակվել է Ազգային հիվանդանոցի հոգաբարձու: Սկսած 1860 թվականից Ս. Մանուկյանը մշտապես ընտրվել է Ազգային ժողովի երեսփոխան, ֆինանսական խորհրդի, քաղաքային ժողովի և վարչական ատյանի անդամ: 1860 թ. ազգային սահմանադրության ընդունումից հետո Ս. Մանուկյանն ընտրվել է ազգային երեսփոխան, իսկ 1861 թ.՝ Ելևմտից խորհրդի անդամ: 1865 թ. նա քաղաքային ժողովի անդամ էր:

1867 թ. սկսած՝ ինը տարի շարունակ Ս. Մանուկյանը ղեկավարել է Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցի հոգաբարձուների խորհուրդը, որի «պարտականությունները ծայր աստիճան խոհականութեամբ վարեց» [80]: Մինչև 1876 թ. Ս. Մանուկյանը «իրական բարիք մը եղավ» Ազգային հիվանդանոցի համար և «միայնակ վարեց» հոգաբարձուների խորհուրդը [81]: Մեծ բարերարը հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի անփոփոխ ատենապետն էր, իսկ ատենադպիրը Մկրտիչ Աղաթոն էր: Խորհրդի երևելի անդամներից էին բժիշկ, ազգային գործիչ Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Քեաթիպյանը, Հակոբ Նորատունկյանը և ուրիշներ [82]: 1874-1879 թթ. Ս. Մանուկյանը Կ. Պոլսի քաղաքային ժողովի անդամ էր, 1880 թ.՝ վարչական ատյանի անդամ: 1885-1887 թթ. և 1889-1891 թթ. նա կրկին ընտրվել է ազգային երեսփոխան:

«Բուլվեր» օթյակի՝ վերը հիշատակված անդամները իրենց հասարակական գործունեության տարիներին հավատարիմ մնացին մասոնության համամարդկային գաղափարներին և ազատության, հավասարության, եղբայրության հիմնարար սկզբունքներին: «Բուլվեր» օթյակը գործել է 33 տարի և փակվել 1894 թ. փետրվարին:

Այդ տարիներին օթյակի անդամները բարձր են պահել ազատ որմնադիրների ընկերության անդամի պատիվն ու արժանապատվությունը: Նրանցից Հ. Բուլվեր Լիթթոնը և Ս. Ազնավուրը մասոնության պատմության մեջ եզակի դեմքեր էին, ովքեր հավատում էին, որ իրենց ստեղծած օթյակը կարող է անել այն, ինչը ի վիճակի չեն իրականացնել Կ.Պոլսում գործող հասարակական կազմակերպությունները: «Բուլվեր» օթյակի անդամներն իրենց գործունեությամբ էական առաջընթաց քայլ կատարեցին արևմտահայ մտավորականության շրջանում մասոնության գաղափարները տարածելու և հայկական օթյակ ստեղծելու ուղղությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Желтяков А. Д., Петросян Ю.А., История просвещения в Турции (конец XVIII по XX века). М., 1965, с. 39.
2. Թոփչեան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, մաս առաջին, Թիֆլիս, 1909, էջ 240:
3. Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում 1860-1910, Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 5:
4. Մասոնությունում կանոնավոր համարվում է այն օթյակը, որը հիմնվում է որևէ երկրի «Մեծ» կամ «Մեծ Արևելք» օթյակի արտոնագրով և գործում է «մասոնության աստվածաշունչ» համարվող Ջեյմս Անդերսոնի «Սահմանադրության» 12 հիմնարար սկզբունքների համաձայն: Տե՛ս Бейджент М.,Ли Р. Храм и ложа. От тамплиеров до масонов. Пер. с англ. М., 2006, с.205; Карпачев С.П. Масоны. Словарь, М., 2008, с. 234, 334-336.
5. Սիրունի Յ.Ճ., Պոլիս և իր դերը, երրորդ հատոր, Անթիլիաս, 1987, էջ 208:
6. Պէյլէրեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանյան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակը ԺԹ դարուն. - «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրութ, 2001, էջ 151, O. Jamgocyan. Les Francs – Maçons Arméniens et la Constitution de l'Arménie ottomane Constantinople, 1863, Paris, 2017, p. 60.
7. «Կեանք եւ Արուեստ», Տարեգիրք Ե տարի, Փարիզ, 1935, էջ 78:
8. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 154:
9. Տե՛ս D. Sommer, Freemasonry in the Ottoman Empire: A History of the Fraternity and its Influence in Syria and the Levant. I. B. Tauris, Londers, New York, 2015.
10. Թոփչեան Ե., նշվ. աշխ., էջ 232:

11. Петросян Ю.А. Младотурецкое движение, М., 1971, с. 39.
12. Տե՛ս Konitz Stanly. Bulwer. Sir Henry. H.W.Wilson, 1936; Mitcheld G.Bulwer Lytton: The Rise and Tall of a Victorian Man of Letter, London, New York, 2003. Дипломатический словарь . Гл. ред. А.Я. Вышинский и С.А. Лозовский, т. 1, М., 1948.
13. Hrono.ru/biograf/bio/bulwerlitton.php:
14. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153:
15. «Արևմուտք», Փարիզ, 1859, 15 հուլիսի, թիվ 14, էջ 101:
16. Նույն տեղում:
17. «Մասիս», 1860, 14 հուլիսի, թիվ 440:
18. «Մասիս», 1860, 28 հուլիսի, թիվ 442:
19. «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1860, օգոստոս, թիվ Ը, էջ 654-665:
20. «Արշալույս արարատյան», 1863, 13 հունվարի, թիվ 692:
21. Նույն տեղում:
22. «Արշալույս արարատեան», 1863, 9 փետրվարի, թիվ 694:
23. «Կեանք եւ Արուեստ», Տարեգիրք Ե տարու, Փարիզ, 1935, էջ 79, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 154, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 57, 62:
24. «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 79, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 154, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 62:
25. Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը: Ընդարձակ օրացոյց Ս.Փրկչեան հիվանդանոցի հայոց, Կ.Պոլիս, 1910, էջ 250:
26. Նույն տեղում, էջ 253:
27. «Հայրենիք», Բոստոն, 1937, մարտ, թիվ 5, էջ 77, «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93, նույն տեղում, 1955, հունիս, թիվ 6, էջ 91, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:
28. «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 83, «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:
29. Զարդարեան Վ., Յիշատակարան, Ա-Ե հատոր, Գ մաս, Գահիրե, 1939, էջ 78:
30. «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 77, Զարդարեան Վ., Յիշատակարան, Ա-Ե հատոր, Գ մաս, էջ 78: Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:
31. «Մասիս», Կ.Պոլիս, 1862, 27 հունվարի, թիվ 520:
32. Զարդարեան Վ., Յիշատակարան, առաջին հատոր, Կ.Պոլիս, 1910, էջ 86:
33. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 175, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 82-83:
34. Տե՛ս «Մասիս», Կ.Պոլիս, 1862, 27 հունվարի, թիվ 520, 25 օգոստոսի, թիվ 551, 8 նոյեմբերի, թիվ 560, 1865, 1 մայիսի, հավելված:
35. «Մասիս», 1865, 1 մայիսի, հավելված:
36. «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, թիվ 10, էջ 93:
37. «Մասիս», 1865, 1 մայիսի, հավելված:
38. Չիլինկիրյան Գ., Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, 1883, էջ 56:
39. Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 16:
40. Роллен Жекмен М.Г. Армения, армяне и трактаты. «Положение армвн в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.
41. Չիլինկիրյան Գ., նշվ աշխ., էջ 58:
42. «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 75:
43. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 159:
44. «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73-74, «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79-81, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 67-75:

45. «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79:
46. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161:
47. «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73-74, «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 77, «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 168, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 91:
48. «Հայրենիք», 1937, ապրիլ, թիվ 6, էջ 130-132:
49. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 169:
50. Նույն տեղում, էջ 170:
51. Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Բ, Պէյրութ, 1961, էջ 4359-4360:
52. Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 487:
53. «Մասիս», 1865, 1 մայիսի, հավելված:
54. «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 94, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 176, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 94:
55. Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 107
56. Տե՛ս «Մասիս», 1861, 13 դեկտեմբերի, թիվ 514:
57. «Մեղու», Կ.Պոլիս, 1862, 10 մայիսի, թիվ 161:
58. Տե՛ս Շարասան, Թրքահայ բեմն և իր գործիչները, Կ.Պոլիս, 1914, էջ 10:
59. Չոպանյան Ա., Մկրտիչ Պեշիկթաշլյան, Փարիզ, 1907, էջ 106:
60. Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 2, Երևան, 1969, էջ 10:
61. Բերբերեան Ռ., Հայ մասօնները և «Սէր» օթեակը Պոլսոյ մէջ. -«Հայրենիք», Բոստոն, 1937, մարտ, թիվ 5, էջ 81:
62. Բերբերեան Ռ., նշվ. աշխ., -«Հայրենիք», 1937 մայիս, թիվ 7, էջ 128:
63. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 15:
64. Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 254:
65. Նույն տեղում, էջ 255:
66. «Մասիս», 1868, 27 նոյեմբերի, թիվ 868:
67. «Մասիս», 1867, 11 մարտի, թիվ 787, 26 մարտի, թիվ 789, 28 հոկտեմբերի, թիվ 820, 1868թ., 27 հունվարի, թիվ 833, 16 մարտի, թիվ 840, 1869թ., 1 փետրվարի, թիվ 904:
68. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 178, Jamgocyan O, նշվ. աշխ., էջ 60:
69. «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 13, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 102:
70. «Մասիս», 1867, 18 մարտի, թիվ 788, «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 130:
71. «Ծիածան», Կ.Պոլիս, 1869, 13 դեկտեմբերի:
72. Շարասան, նշվ. աշխ., էջ 11:
73. Նույն տեղում, էջ 12:
74. Նույն տեղում:
75. Петросян Ю.А. Указ. соч., с. 52-65.
76. Շարասան, նշվ. աշխ., էջ 12:
77. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 150:
78. Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 254:
79. Զարարեան Վ., Յիշատակարան, առաջին հատոր, էջ 75:
80. Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Բ, Պէյրութ, 1961, էջ 4433:
81. Քէչեան Բ., Պատմութիւն Սուրբ փրկչի Հիւանդանոցին Հայոց ի Կոստանդնուպոլիս, Կ.Պոլիս, 1888, էջ 237:
82. Նույն տեղում, էջ 224-225:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Կ. Պոլսի «Բուլվեր» օթյակի երևելի դեմքերը
Ֆելիքս Մովսիսյան

1850-1860-ական թվականներին Օսմանյան կայսրությունում Թանզիմաթի երկրորդ փուլում իրականացված բարեփոխումները նպաստավոր պայմաններ ստեղծեցին սահմանադրական շարժման սկզբնավորման, մասոնական գաղափարախոսության տարածման և օթյակների հիմնադրման համար: Այդ տարիներին եվրոպացի ազատ որմնադիրների ջանքերով Կ.Պոլսում և Զմյուռնիայում հիմնվեցին «Արևելյան» թիվ 687, «Բոսֆորի աստղ», «Հոմեր» թիվ 806 օթյակները: 1861թ. նոյեմբերի 9-ին Կ.Պոլսում անգլիական դեսպան Հենրի Բուլվեր Լիթթոնը հիմնեց անգլախոս օթյակ, որն իր պատվին կոչվեց «Բուլվեր» թիվ 891 օթյակ: «Բուլվեր» օթյակին անդամագրվել են 11 հայ ազատ որմնադիրներ: Նրանցից փաստաբան Սերովբե Ազնավուրը օթյակի հիմնադրման պահին ընտրվել է օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ: Ս. Ազնավուրը 19-րդ դարի արևմտահայ մասոնության ամենակարկառուն դեմքն էր, ով Լոնդոնի «Հորդանան» թիվ 201 և Մանչեսթրի «Odd Fellows» օթյակների անդամ էր, մեծ հեղինակություն էր վայելում եվրոպական մասոնների շրջանում: Ս.Ազնավուրը հանդիսանում էր Կ.Պոլսում գործող եվրոպական 7 օթյակներից հինգի հիմնադիրներից մեկը և հայկական «Սեր» օթյակի հիմնադիրը: «Բուլվեր» օթյակի գործունեության տարիներին օթյակին անդամագրվել են Թուրքիայում Սերբիայի դեսպանատան առաջին թարգման Թադեոս Թերխանը, Բարձր դռան բարձրաստիճան պաշտոնյա Ասատուր էֆենդի Սարգսյանը, Կ.Պոլսի Առևտրի պալատի հիմնադիրներից Սենեքերիմ Մանուկյանը, վաճառական Մարտիրոս Հարենցը, Տիրան Շամդանջյանը և ուրիշներ: Օթյակի երևելի դեմքերից մեկը թատերական անվանի գործիչ, «Արևելյան թատրոնի» ղեկավար, «Օսմանիե» թատրոնի հիմնադիր Հակոբ Վարդովյանն էր:

«Բուլվեր» օթյակի հայ անդամներն իրենց գործունեությամբ լուսավոր փարոսներ եղան Մերձավոր Արևելքի մահմեդական խավարչտին օվկիանոսում: Օթյակը գործել է բավականին արգասաբեր՝ երեսուներեք տարի և փակվել 1894 թվականի փետրվարին:

РЕЗЮМЕ
Видные представители константинопольской ложи «Бульвер»
Феликс Мовсисян

Ключевые слова: танзимат, К. Полис, масонство, ложа, О. Бульвер, С. Азнавур, А. Вартовян, С. Манукян.

Реформы, осуществленные в Османской империи в 1850-1860-е гг. во время второго этапа Танзимата, создали благоприятные условия для формирования конституционного движения, распространения масонской идеологии и основания лож. В эти годы усилиями европейских вольных каменщиков в Константинополе и Смирне открылись ложи № 687 «Восточная», «Звезда Босфора», № 806 «Гомер». 9 ноября 1861 года английский посол в Константинополе Генри Бульвер-Литтон основал англоязычную ложу, которая в честь него была названа ложей № 891 «Бульвер». Членами ложи «Бульвер» стали 11 армянских вольных каменщиков. Один из них, адвокат Серовбе Азнавур, с момента основания ложи был избран первым Достопочтимым Мастером ложи. С. Азнавур был одним из самых видных западноармянских масонов 19 века, который был членом лондонской ложи № 201 «Иордания» и манчестерской ложи «Odd Fellows» и пользовался большим авторитетом среди европейских масонов. С. Азнавур являлся основателем пяти из семи европейских лож, действо-

вавших в Константинополе, и учредителем армянской ложи «Сер» (Любовь). В период деятельности ложи «Бульвер» ее членами стали первый переводчик посольства Сербии в Турции Тадеос Терхан, высокопоставленный чиновник Высокой Порты Асатур-эфенди Саргсян, один из основоположников константинопольской Торговой палаты Сенекерим Манукян, негоциант Мартирос Харенц, Тиран Шамданджян и другие. Одним из выдающихся представителей ложи был известный театральный деятель, руководитель «Восточного театра», основатель театра «Османие» Акоп Вардовян.

Армянские представители ложи «Бульвер» своей деятельностью стали освещающими маяками в мрачном мусульманском океане Ближнего Востока. Ложа работала довольно продуктивно, просуществовала тридцать три года и была закрыта в феврале 1894 года.

SUMMARY
Outstanding Figures of the "Bulver" Lodge in Constantinople
Feliks Movsisyan

Keywords: Tanzimat, K. Polis, Freemasonry, Lodge, O. bulver, S. Aznavour, H Vartovyan, S. Manukyan.

The reforms carried out during the second phase of the Tanzimium in the Ottoman Empire in the 1850-1860s created favorable conditions for beginning the constitutional movement, the propagation of the Masonic ideology and the establishment of the lodges. In those years, thanks to the efforts of European free casters “the Eastern Heights” No. 687, “Bosphorus Star”, “Homer” No. 806 lodges were established in Constantinople and Smyrna. In November 9, 1861 the British Ambassador to Constantinople, Henry Boulevard Littone founded an English-speaking lodge, which was named "Bulver" No. 891 in honor of him. 11 Armenian free casters joined the "Bulver" lodge. Their attorney, Serovbe Aznavour was elected the first Honorable Master of the Lodge at the time of the establishment of the Lodge. S. Aznavour was the most prominent figure in the 19th century Western Armenian Masonry, who was a member of London “Jordan” No. 201 and Manchester “Odd Fellows” lodges and had a great reputation among European masons. S. Aznavour was one of the founders of five European lodges out of seven operating ones in Constantinople and the founder of the Armenian "Ser" ("Love") Lodge. The first translator of the Serbian Embassy in Turkey Thaddeus Tercan, Senior High Officer Asatur Effendi Sargsyan, one of the founders of Chamber of Commerce of Constantinople Senekerim Manoukyan, merchant Martiros Harents, Tiran Shamdanjyan and others joined the lodge. One of the most prominent figures of the lodge was Hakob Vardovyan, a famous theater figure, the head of the Eastern Theater, the founder of the Ottoman theater. The Armenian members of the "Bulver” Lodge were light beacons in their activities in the Middle East Muslim dark ocean. The lodge functioned quite fruitfully for thirty-three years and was closed in February 1894.